պէս ծանրանում է արեան մի սոսկալի պարտականութիւն: Եւ դա գեղեցիկ խոստումներով գոհացնել չէ կարելի, ինչ որ արուել է մինչեւ օրս»:

Մարքվարտ այն ժամանակ չէր կարող ըսպասել, ի հարկէ, թէ Անգլիայի եւ միւս պետութիւնների միջազգային յանձնառութիւնները Հայաստանի եւ հայերի հանդէպ՝ աւելի արժէք չպիտի ունենային, քան սովորական «գեղեցիկ խոստումները»: Եւ սակայն նրա հետեւեալ խօսքերը ցոյց են տալիս, որ Մարքվարտ սկզբից իսկ լաւատես չէ եղել նման խոստումների հանդէպ:

«Զինադադարի եւ հաշտութեան բանակցութիւնների մինչայժմեան ընթացքը,— ասում է նա,— արդարացի կասկածներ են յարուցում Դաշնակիցների խոստմանց աղնուութեան մասին: Եթէ նրանց համար Հայաստանի աղատագրութիւնը իսկապէս որ լուրջ հանգամանք ունի, ինչո՞ւ ուրեմն անմիջապէս, զինադադարի պայմանների մէջ իսկ պահանջ չեն դրել եւ իրականացրել ամբողջ Հայաստանի (մինչեւ Թոքատ) պարպումը տաճիկներից: Վիլսոնը հաւանօրէն չէ մոռացել այն չնական պատասխանը, որ Էնվէր փաշան տուել էր Մորգենթաուին.

«Եթէ մենք պատերազմին յաղթական դուրս գանք, ո՞վ պիտի մեզնից հաշիւ պահանջի մեր գործերի համար: Իսկ եթէ պիտի պարտուինք, այդ դէպքում հօ մեր վախճանն է եկել: Այդ պարագային հայկական հարցը մի առանձին դեր էլ չի խաղայ արդէն»:

Էնվէրն այն ժամանակ կարո՞ղ էր մտքով անցկացնել, որ Ռուսաստանը «սոցիալիստական-պրոլետարական» պիտի դառնայ, որ ինքը 2-3 տարի ետք Զինովիեվների ու Ռատէքների կողքին պիտի բազմի Բաղուի համաժողովում, նրանց գործօն օժանդակութեամբ էլ՝ ոտի կանգնի գետին տապալուած Թուրք պետութիւնը: Պատմութիւնը եւ բնութիւնն իսկ դէմ էին խօսում նման մի հրաշքի, ինչպէ՞ս հնարաւոր համարէր այն Էնվէրը:

Ձծանրանանք այս ցաւոտ խնդրի վրայ:

Որո՞նք էին, Մարքվարտի կարծիքով, այն քաղաքական պահանջները, որ հայութիւնը կատարեալ իրաւունքով առաջադրել կարող էր Տաճկաստանին եւ Դաշնակիցներին, որպէս վերականգնուող ազգային պետութիւն:

Ըստ էութեան ա՛յն, ինչ որ այն ժամանակ հայկական գրեթէ բոլոր շրջանների պահանջն էր:

Առաջին հերթին, գրում էր Մարքվարտ 1919-ին, «Հայաստանի Հանրապետութեանը պիտի կցուին Տաճկահայաստանի այն մասերը, որոնք գրաւուած էին ռուս բանակների կողմից» (1917): Բայց մի՞թէ, շարունակում է նա, տաճիկների ձեռքին պիտի մնան Փոքր Հայքը, որ հայերը իրենց քրտինքով ու արիւնով են ոռոգել ու պարարացրել, Կիլիկիան, որ հայ սպասեալները եւ հայ գիւղացիները ծաղկեցրին. մի՞թէ դրանք «ծոյլ ու բարբարոս թիւրքին ձեռքը պիտի մնան... Ո՛չ, անհրաժեշտ է, որ հանդիսաւորապէս երաշխաւորուի, հայ ազգի սեփականատիրական անկապտելի իրաւունքը իր պատմական ամբողջական հայրենիքի վրայ, մէջն առնելով Փոքր-Հայքն ու Կիլիկիան... Միայն այդ պարագային կարող է Հայաստանը վերստին ու յաջողապէս պատմականօրէն իրեն վիճակուած դերը խաղալ,— լինել կապ Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ: Որ հայերը ոչ միայն քաղաքացիական, այլ եւ աւելի բարձր մշակոյթի, գեղարուեստի մէջ մեծ արժէքներ կարող են արտադրել, որով եւ քաղաքակիրթ ժողովուրդների կատարեալ համակերպանքին արժանանալ, այդ էլ ցոյց է տալիս Եօզէֆ Ստրժիգովսկիի7) մեծահատոր ու խիստ շահեկան՝ «Հայկական ճարտարապետութիւնը եւ Եւրոպա» աշխատութիւնը:

Թող առարկութիւն չարուի թէ՝ հայերը սոսկալի դէպքերից յետոյ շատ են նուազել, թէ նրանք ի վիճակի չեն այդ ընդարձակ տարածութիւնները լեցնել: Հայերը մալթուսականներ չեն եւ դեռ միջին դարերում, 6-րդ դարից սկսած մինչեւ 12-րդ դար, այն էլ ոչ շատ աւելի լաւ պայմաններում քան այժմ, բնակչութեան յաւելումներ են արտադրել: Նորահիմն հայ պետութեան կոչը դաղութահայութեան՝ վերադառնալու հայրենիք եւ վերակենդանացնելու այն, կենդանի արձագանգ կը

7) Այդ աշխատութեան մասին յոյս ունինք, որ առիթ կը լինի խօսելու այս էջերում: